



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

» 08 « օգոստոս 2019թ.

N 2191Ձ

ք. Ստեփանակերտ

**ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԴՂՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդունելությունը կանոնավորելու և այն <<Նախադպրոցական կրթության մասին>> Արցախի Հանրապետության օրենքի և <<Պետական նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ

1. Հաստատել <<Պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդունելության կարգը>> համաձայն հավելվածի:
2. Անվավեր ճանաչել 2011թ. հունիսի 27-ի <<Պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդունելության կարգը>> հաստատելու մասի՝ N127/Մ հրամանը:
3. ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կրթության և գիտության վարչության պետ Ռ. Մուսայեյանին՝ սույն հրամանով հաստատված կարգը ներկայացնել պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների տնօրեններին, ԱՀ շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժինների վարիչներին:



Ս. ԱՂԱԲԱԼՅԱՆ

Կ Ա Ր Գ

**Պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններում
երեխաների ընդունելության**

1. Նախադպրոցական ուսումնական հաստատություն /մանկապարտեզ/ և դպրոցների նախադպրոցական խմբեր կարող են ընդունվել 2,5 մինչև 6 տարեկան երեխաները:

2. Պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների երեխաների ընդունելությունը կատարել տարվա ընթացքում՝ մասսամբ, իսկ օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը՝ տարիքային խմբերի սանդղակի բարձրագույն ժամանակ առաջացած ազատ տեղերը լրացնել ըստ հերթագրման ցուցակի:

3. Նախադպրոցական ուսումնական հաստատություն երեխայի ընդունման համար ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- 1/ դիմում,
- 2/ լուսանկար,
- 3/ երեխայի ծննդյան վկայականի պատճեն,
- 4/ բժշկական տեղեկանք երեխայի առողջության մասին,
- 5/ տեղեկանք բնակավայրից,
- 6/ տեղեկանք ընտանիքի կազմի վերաբերյալ,
- 7/ տեղեկանք գոհված զինծառայողի, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամի, միայնակ մոր երեխա լինելու վերաբերյալ,
- 8/ տեղեկանք աշխատանքի վայրից:

4. Նախադպրոցական ուսումնական հաստատության և ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

5. Նախադպրոցական հաստատություն ընդունվելու իրավունք ունի նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա, սակայն հաշվի առնելով համայնքային կենտրոնների նախադպրոցական հաստատությունների խտությունը և նախադպրոցական հաստատություն չընդգրկված երեխաների մեծ թիվը՝ ժամանակավոր սահմանել առաջնահերթ ընդունելության հետևյալ կարգը.

- 1/ հաշմանդամություն ունեցող երեխաները՝ համապատասխան պայմանների առկայության դեպքում
- 2/ գոհված զինծառայողների երեխաները,
- 3/ 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների երեխաները,
- 4/ Բազմազավակ ընտանիքների երեխաները, որտեղ կա երկու և ավել նախադպրոցական տարիքի երեխա:

6. Մինչև սեպտեմբերի 1-ը 5 տարեկանը չլրացած երեխաներին ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) ցանկությամբ թույլատրել հաճախելու տվյալ նախադպրոցական հաստատություն մինչև հաջորդ տարվա օգոստոսի 1-ը: